ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCE OF THE REPUBLIC OF ARMENIA

**«ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» ՊՈԱԿ**

**"NATIONAL BUREAU OF EXPERTISES" SNPO**

0004, ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24
24 Tsovakal Isakov Ave. 0004, Yerevan

Հեռ՝ (37410) 777710
Тел: (37410) 777710
Fax: (37410) 777704

№ 05/196

12 05 2014թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու
ընթացակարգի հնարավոր մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքները (գնման հայտը կցվում է):

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ՓԱԲ-ՇՀԱՊՁԲ-(11/8)-14/6»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ հայտերը անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Իսակովի 24, առաջին մասնաշենք N 16 սենյակ հասցեով, Ա. Խաչատրյանին (հեռ. (010) 777710 (222)), մինչև 2014թ մայիսի 22-ը, ժամը 11:00-ը:

Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ք. Երևան, Իսակովի 24, առաջին մասնաշենք N 16 սենյակ հասցեով, 2014թ. մայիսի 22-ի, ժամը 11:00-ին:

Գնման առարկա է «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութերիձեռքբերումը, որը կազմված է 29 չափաբաժնից: Ապրանքի գնման տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերով (ծանուցում):

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում "Շրջանակային համաձայնագրեր" բաժնի "հրավերներում կատարված փոփոխություններ" ենթաբաժնում):

Սույն ծանուցմանը կցված գնման հայտում նշված համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութերի այն չափաբաժինների գծով, որոնցով սահմանված են ապրանքների ֆիրմային անվանումները, գնային առաջարկ ներկայացնելու դեպքում, մասնակիցները գնային առաջարկով համարժեք ապրանք առաջարկելու դեպքում ներկայացնում են նաև առաջակվող ապրանքի ֆիրմային անվանումը և համառոտ տեխնիկական բնութագրերը:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Տնօրենի տեղակալ Ե. Զադոյան